

լով աւելի թեթեւ իր գծերուն և գոյնե-
րուն մէջ, թէեւ ան ալ գոյներու ճաշակին
մէջ տկար է, ասկէ զատ լուսանցազար-
դերը որ իր են՝ ոչ մէկ նորութիւն ունին:

Եւ Սակայն Գրիգոր երէց հասարակ
մանրանկարիչ մը և ծագկող մը նկատուե-
լու չէ, այլ մէկը որ երկար ժամանակ սոր-
ված է իր արուեստը և ժամանակին ճա-
շակը խրացուցած մասնաւոր կերպով
անոր հետամուտ ըլլալով: Իր երկու մա-
նրանկարները՝ որոնց արտատպութիւն տը-
ւինք հոս՝ մանաւանդ թիւ 1ը՝ արտայայ-
տիչ են: Անոնք ապրող, շնչող իսկական
տիպեր են: Եւ եթէ նոյն իսկ հաստատուի
որ անոնք իր յղացումները չեն, սակայն
այդ կերպաւորումներուն իր կողմէ զա-
տուած և գործածուած ըլլալն անգամ

զրաւական մըն է իր արուեստական հըմ-
տութեան: Որովհետեւ վերջապէս ինչ որ
ալ ըլլայ Գրիգոր Երէց մեզի կը կտակէ
արուեստի ձեւ մը որ օղակ մըն է մեր
արուեստի պատմութեան շղթային համար:

Իսկ Գրիգոր երէցի յիշատակարանը
ցոյց կու տայ որ միայն մագաղաթեայ
կրկնազիրներ չկան, այլ կան նաեւ մա-
նրանկարչական «կրկնազիրներ»: Ծանօթ
էին վերակերտական փորձեր զանազան հին
ձեռագիրներու ծագկումներուն վրայ, սա-
կայն հազիւ երեք տարի առաջ ծագկուած
ձեռագիր մը դարձեալ ծագկելու մանրա-
նկարելու այս փորձը՝ հաւանականութիւն
մը, ծանօթութիւն մը եւս կ'աւելցնէ մեր
մանրանկարչական մութ պատմութեան
համար:

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

ԼԵՋՈՒԱԿԱՆ

Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի Հ Ա Ր Ց Ե Ր

ՔՆՆԱԳՈՒՅՆ ԵՐՈՒՍ

Ի լոյս ընծայելով վերջին մասնագի-
տական երկարաշունչ աշխատութիւնս՝ Ուղ-
ղագրութիւն և առգաւառութիւն հայերեւելի, փա-
փաքեցայ և կարծեցի լաւագոյն բաներն
ըսել մեր լեզուի կարեւորագոյն և անլոյծ
կամ անծանօթ մնացած խնդրոց մասին:
Առանձինն ու հայ մամուլին մէջ բանիմաց
անձանց կողմանէ յայտնուած տեսութիւնք
համոզեցին զիս՝ թէ նպատակիս հասած
էի: Ճշմարիտ բանասիրին հաճելի է ան-
շուշտ՝ գնահատութեանց հետ լսել իւր
գործին թերութիւնքն ալ, որոյ մէջ իսկ
է յառաջագիմութիւնը: Սակայն ես զըժ-
բախտութիւնն ունիմ հանդիպելու յաճախ
այնպիսի դատաւորաց, որոց հանդէպ կը
ստիպուիմ փոխել դերս, և ես ինքնին
դատաւոր կանգնիլ իրենց: Անոնց միոյն՝
որ երեւեցաւ Յուսաբերի մէջ (1934, նոյ.
10, 17), արժանաւորագոյն պատասխանն
համարեցայ լռութիւնը, որ ոմանց դէմ
աւելի պերճախօս է քան զրիչը: Երկրոր-

դին՝ Սիոնի մէջ (1935, 220), որ աշ-
խատութիւնս ի հիմանց տապալելու ելած
էր, յետ ուշի ուշով կարգալու պատաս-
խանցի՝ թէ «կօշկակարը թող կօշկէն
վեր չեւնէ» (Բզմ. 1935, 229). համոզ-
ուեցաւ ու գնաց նստաւ կօշկին բով:
Երրորդ դատաւոր մ'ունեցայ յանձին Խ.
Քարտաշի, դարձեալ Սիոնի մէջ (1936,
220), բայց աւելի մեծանձն, — զայս կ'ը-
սեմ ի սէր արդարութեան, — որ գնահա-
տելով գործս, շատացաւ սրբագրել անոր
քանի մը տկար կամ սխալ կարծած կե-
տերը: Զիս ընդ երկար կաշկանդող աշ-
խատութենէ մ'ազատած, կու գամ այժմ
պատասխանել իրեն և ուրիշներու:

Քարտաշ կը դիտէր՝ թէ «արժէքաւոր
մասերուն բով ունիմ խորշելի պնդումներ
ալ, որոնք եթէ հասկնալի են ձեռնհաս-
ներուն, սակայն անմատչելի կամ գէթ
խրտչելի են ժողովրդին, մանաւանդ ա-
շակերտին»: Ընթերցողաց այս զանազա-